

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻ ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ
ՅՈՒՐԻ ՎԵՍԵԼՈՎՍԿՈՒ «СТИХОТВОРНЫЕ ПЕРЕВОДЫ»
ԳՐՔՈՒՅԿԻ ՄԱՍԻՆ*

Քանալի բառեր՝ Աղբալյան, Վեսելովսկի, «Մուրճ» ամսագիր, թարգմանություն, գրքույկ, գրախոսական:

Գրականագետ, գրաքննադատ, հասարակական-քաղաքական, պետական-կուսակցական գործիչ, մանկավարժ Նիկոլ Աղբալյանը (1875–1947) հայ իրականության կարկառուն դեմքերից է՝ 1896 թվականից իր գրաքննադատական գործունեությունը² սկսել է Թիֆլիսում լույս տեսնող «Մուրճ» ամսագրի էջերում: «90-ական թվականների նրա հոդվածները՝ իրենց ուղղվածությամբ, հարցադրումներով համահունչ են ամսագրի խմբագիր Ավ. Արասխանյանի ըմբռնումներին, – գրում է անվանի գրականագետ Գ. Անանյանը: – Ձգտելով իր ամսագիրը դարձնել ոչ միայն գեղարվեստական անթերի գործերի ժողովածու, այլև գեղարվեստական զարգացման ընթացքը ամբողջության մեջ արտացոլող և այդ ընթացքի վրա ներգործող օրգան, Արասխանյանը «Մուրճի» էջերը լայնորեն բացել էր և՛ դասականների, և՛ սկսնակների առաջ, այստեղ տպագրվում էին և՛ ռեալիստները, և՛ ռոմանտիկները, այլ խոսքով՝ խմբագիրը ձգտում էր ընդգրկել գրական կյանքի ամբողջական համայնապատկերը: Աղբալյանի որոշ ըմբռնումներ ուղղակի արձագանքում են Արասխանյանի հայացքներին»³: Նկատվել է նաև, որ «Աղբալյանը մշտապես գրական կյանքի ընթացքի մեջ էր, արձագանքում էր հասունացած խնդիրներին, արժեքավորում նշանակալից ստեղծագործությունները, մերժում գրական միջակությունն ու խոտանը: Մի ուրիշ հատկանիշ էլ ուներ Աղբալյանը՝ քննադատը. սիրով հետևում էր իր ճանաչած տաղանդի զարգացմանը, խրախուսում նոր հաջողությունները, անխնա դատապարտում վրիպումները»⁴:

Աշխատակցելով «Մուրճ»-ին՝ արդեն իսկ 1896 թվականից Ն. Աղբալյանը տպագրում է գրախոսություններ՝ ներկայացնելով հայ նոր, ռուս ու եվրոպական

* Ներկայացվել է 02. IV. 2026 թ., ընդունվել է տպագրության 18. VI. 2026 թ.:

© Հեղինակ/ներ, 2026: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

¹ Ն. Աղբալյանի կյանքի և գործունեության մասին մասնավորապես տե՛ս Արմեն Մանուկյանի՝ ՊԲՀ-ում տպագրած հոդվածը (2025, № 2, էջ 101–123)՝ նրա ծննդյան 140-ամյակի առթիվ:

² Այդ մասին մանրամասն տե՛ս Գ. Գ. Անանյան. Նիկոլ Աղբալյան. կյանքը և գրական-հրապարակախոսական գործունեությունը, Երևան, 2002, էջ 89–201:

³ Նույն տեղում, էջ 109–110:

⁴ Գ. Գ. Անանյան. Նիկոլ Աղբալյանը քննադատ: Դասախոսություն, Երևան, 1989, էջ 58:

թե՛ ժամանակակից, թե՛ դասական բազմաթիվ հեղինակների գործերը: Համարյա բոլոր գրախոսականներում անհրաժեշտ էր համարում անդրադառնալ լեզվի խնդիրներին, գնահատել հեղինակի կամ թարգմանչի լեզվական արվեստը, առաջադրել զարգացման ուղիները⁵: Թարգմանությունների առիթով նա սիրում էր կրկնել ռուս հայտնի բանաստեղծ ու թարգմանիչ Վ. Ժուկովսկու կարծիքը՝ «Արձակի թարգմանիչը ստրուկ է, բանաստեղծությանը՝ մրցակից»⁶:

Ըստ Աղբալյանի՝ թարգմանությանը պետք է մոտենալ ստեղծագործ մղումով՝ պահպանելով բնագրի ոգու շունչը, դիրքը, ներքին շարժումն ու սահունությունը, որոնք էլ դառնում են *բանաստեղծների փարբերության* հիմքը: Նա գտնում էր, որ հիշյալ չափանիշներից շեղումը հանգեցնում է գեղարվեստական գործի թարգմանության արժեքազրկմանը:

Ահա այս տեսանկյունից է Ն. Աղբալյանը մոտեցել և, ըստ էության, մերժել արդեն իսկ անուն վաստակած ռուս գրականագետ-քննադատ, բանաստեղծ, թարգմանիչ, «Հայ արձակագիրներ» («Армянские беллетристы») ժողովածուի կազմող, խմբագիր և հրատարակիչ (Մ. Բերբերյանի մասնակցությամբ, 1893 թ.), Գ. Սունդուկյանի «Պեպո»-ի ռուսերեն թարգմանիչ (Ալ. Ծատուրյանի հետ, 1896 թ.) Յուրի Վեսելովսկու⁷ «Բանաստեղծական թարգմանություններ» ժողովածուի պրակ 1-ը: Դրանում զետեղված են տարբեր թվականներին զանազան պարբերականներում տպագրված թարգմանություններ ինչպես հայ [Ալ. Ծատուրյան, Ա. Շահագյոզ, Հովհ. Հովհաննիսյան, Լեոնեց (Ա. Նազարբեկյան), Պ. Դուրյան], այնպես էլ եվրոպացի (Հ. Իբսեն և Հ. Հայնե) բանաստեղծների գործերից: Նկատվել է, որ «չնայած հեղինակի բարի կամքին ու ցանկության, գործադրած եռանդին ու ջանքերին» թարգմանություններն անհաջող են, որովհետև «Մենք ունինք հայերենից թարգմանություններ, բայց չունինք Շահ-Ազիզի, Հ. Հովհաննիսյանի, Ծատուրյանի բանաստեղծությունների թարգմանությունը», թարգմանիչը բոլորին «մի հայտարարի է բերել»⁸:

Ստորև հրապարակելով խնդրո առարկա գրախոսությունը՝ ցանկանում ենք ընթերցող լայն հանրությանը ծանոթացնել երիտասարդ Ն. Աղբալյանի գրաքննադատական-գեղարվեստական հայացքներին, մասնավորապես՝ չափածո

⁵ Նույն տեղում, էջ 73:

⁶ Նույն տեղում, էջ 66:

⁷ Յու. Վեսելովսկու մասին մանրամասն տե՛ս Ա. Բժ. Շահ-Նազարեանց. Մարդասիրության եւ աշխատանքի ազնիվ զինուորը՝ Իւրիյ Ալեքսեւիչ Վեսելովսկիյ (18^{xii}/27 89–1899 թթ.), Մոսկուա, 1901, А. Д а в т я н. Юрий Веселовский и армянская литература. Ереван, 1970; Ա. Չ ա ք ա ր յ ա ն. Յուրի Վեսելովսկին և հայ իրականությունը. – ՊԲՀ, 2022, № 2, էջ 89–121:

⁸ Գ. Գ. Ա ն ա ն յ ա ն. Նիկոլ Աղբալյան. կյանքը և գրական-հրապարակախոսական գործունեությունը, էջ 175: Ի դեպ, տարիներ անց Յու. Վեսելովսկու խնդրո առարկա ժողովածուում զետեղված թարգմանությունների վերաբերյալ միևնույն կարծիքն է հայտնել (կարծում ենք, ծանոթ է եղել Ն. Աղբալյանի վերոգրյալ քննադատական դիտարկումներին) Թիֆլիսում հրատարակվող «Զարկ» թերթի խմբագիր, շուրջվերջի գրագետ Գր. Բալասանյանը [տե՛ս «Հանդես ամսորյա» (Վիեննա), 1908, թիվ 12, դեկտեմբեր, էջ 377–378]:

ստեղծագործությունների թարգմանության մի քանի կարևոր սկզբունքներին: Վեսելովսկու գրքույկը ռուս հասարակության՝ հայ գրականության նկատմամբ ունեցած հետաքրքրության վկայությունն է, իսկ Աղբալյանի գրախոսականը գրվել է հետագայում հրատարակվելիք նման գրքերն ավելի կատարյալ դարձնելու բացահայտ միտումով:

Գրախոսության բնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի (այսուհետև՝ ԳԱԹ) Կովկասի հայոց հրատարակչական ընկերության ֆոնդում (ցուց. 1, 5 – I, թ. 1–6): Ի դեպ, ցուցակում գրված է՝ «Գրախոսական, անթվ. արտագրված՝ Ա. Արասխանյանի ձեռքով: ...»: Գրախոսությունը տպագրվել է «Մուրճ» ամսագրի 1898 թ. № 1-ում (էջ 131–135), որն էլ ներկայացնում ենք՝ համեմատելով բնագրի հետ⁹:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

ВЕСЕЛОВСКИЙ, Юрий, «Стихотворные переводы»,
вып. I, Москва, 1898 թ., 76 էջ, գինը 50 կոպեկ

Թարգմանությունները երկու նպատակ ունին. կամ թարգմանիչն ուզում է մայրենի գրականությունը *հարստացնել*, կամ համազգի ընթերցողներին *ծանոթացնել* օտար գրականության հետ: Մենք դեռ այնքան նոր ենք զարթնել «ասիական թմրությունից», դեռ այնքան մանուկ գրականության ու կյանքի տեր ենք, որ զարմանալու բան չկա, եթե օտար գրականություն հարստացնելու համար ոչինչ չունինք ուրիշներին առաջարկելու*: Պարզ է, որ շատ բան տեսած ռուս գրականության համար մեր գրականությունը միայն հետաքրքրական կարող է լինել: Ահա հենց մի այդպիսի հետաքրքրություն է ուզում ստեղծել և եղածին ձգտում է գոհացում տալ Յուրի Վեսելովսկին:

Այդ նպատակը նոր չէ թարգմանչի համար. մի քանի տարի սրանից առաջ Մ. Բերբերյանի ընկերակցությամբ նա լույս ընծայեց «Армянские беллетристы» խորագրով մի աշխատություն, ուր զետեղած էին մեր հեղինակների երկերից կտորներ: Այդ ձեռնարկությունը դժբախտաբար անբախտ** վախճան ունեցավ***:

⁹ Նկատենք, որ Ա. Պետրոսյանի «Նիկոլ Աղբալեան. գրականագիտական հայեացքները» գրքի (*հրատարակվել է 2005 թվականին*) «Յուրի Վեսելովսկու (Նիկոլ Աղբալեանի մատենագիտությունը)» բաժնում (էջ 165–208) այս գրախոսությունը նշված չէ, թեև Գ. Անանյանի՝ դրանից ավելի վաղ՝ 2003 թ., կազմած «Նիկոլ Աղբալյան. մատենագիտություն (1896–1920)» գրքույկի մեջ (էջ 10) այն առկա է:

* Բնագրից բաց է թողնված հետևյալ նախադասությունը. «Ինքնուրույն գրականություն և ամեն ազգի համար հարստություն կազմող ինքնուրույն գաղափարներ ինքնուրույն կյանքով ապրող ազգերը միայն կարող են ծնել. մենք դեռևս մեծ ազգերի սեղանից ենք կերակուր ստանում, մինչև որ կարողանանք նրանց լավության փոխարենը վճարիլ ...»:

** Բնագրում՝ «անհաջող»:

*** Ն. Աղբալյանը նկատի ունի այն իրողությունը, որ «Армянские беллетристы» ժողովածուի 1894 թ. տպագրված երկրորդ հատորի տպաքանակը ցարական

Մեր գրախոսելիք գրքույկը* մի նոր փորձ է, որ անում է Յու. Վեսելովսկին ռուս հասարակությանը մեր չափածո գրականության հետ ծանոթացնելու նպատակով: Հարկավոր է այստեղ նկատել, որ այս գրքույկը ոչ միայն ռուսներին է ծանոթացնելու մեր գրականության հետ, այլև, ամոթ է ասել, մեր հասարակության մի ստվար մասին, որովհետև այդ մասը ոչ միայն իր գրականությամբ չի սնվում, այլև չգիտե իսկ թե ինչ ունի, որովհետև իր մայրենի լեզուն չգիտե:

գրաքննության որոշմամբ ոչնչացվել է (մանրամասն տե՛ս С. Г. Армянская печать и царская цензура. Ереван, 1957, с. 316–318, 409–419; Ч. Գրիգորյան. Վալերի Բրյուսովը և հայ պոեզիան, Երևան, 1959, էջ 27–29, А. Давтян. Юрий Веселовский и армянская литература. Ереван, 1970, с. 49–54): Արդարության դեմ չմեղանչելու համար, նկատենք, որ ժողովածուի առաջին հատորի մասին եղել են նաև ոչ բարենպաստ կարծիքներ: Այսպես՝ Մ. Բերբերյանին ուղղված «1893. հունիսի 3. Թիֆլիս» թվակիր նամակում՝ անգամ իր գործերի տպագրության առումով խստապահանջությամբ հայտնի Նար-Դուրը, մասնավորապես, գրում է. «... քո և Վեսելովսկու սկսած գործը որքան գովելի և օգտակար, նույնքան և դժվար գործ է, որի համար առանձին շնորհակալության արժանի եք երկուսդ էլ. բայց նրա համար, որ գործը դժվար է, դրանով չէ թուլանում պատասխանատվությունը: Իմ համեստ կարծիքով, որքան քիչ գովեք հայ գրողների գեղարվեստական կողմը, այնքան ավելի ճիշտ գնահատած կլինեք նրանց: ... մի խոսքով՝ անպայման գովասանքի տեղ կրիտիկա տվեք – և ձեր գործն անաչառ, ուրեմն և – կրկնապատիկ ավելի գնահատելի գործ կլինի» (ԳԱԹ, Մ. Բերբերյանի ֆ., № 212, Գրական ժառանգություն, առաջին գիրք, Երևան, 1961, էջ 161–162, Նար-Դու. Երկերի ժողովածու չորս հատորով, հ. չորրորդ, Երևան, 1990, էջ 101–102): Տիգրան Հովհաննիսյանն էլ «Մշակ»-ում գրում է. «Վերջին տարիներս մի տեսակ մոդա է դարձել հայերենից ռուսերեն թարգմանել: Թարգմանում են մեծ մասամբ այնպիսի բաներ, որ չարժե թարգմանել, և այնպիսի մարդիկ, որոնց ուժերից վեր է մարդավարի թարգմանելը:

«Traduttore-tradiore» [sic!] (թարգմանիչները դավաճան են) – ասում է իտալական առածը: Գուցե ոչ ոքի այնքան սազ չէ գալիս այդ առածը, որքան հայերենից ռուսերեն թարգմանողներին, ի բաց չառած և պ. պ. Յուրի Վեսելովսկուն և Մ. Բերբերյանին, որոնք անշուշտ վատ չեն թարգմանել, բայց լավ բաների հետ թարգմանել են և թարգմանել են տվել այնպիսի թույլ բաներ, այնպիսի անհամ գրվածքներ, որ (,) համենայն դեպս, չարժեր ի ցույց հանել: // «Ինձ պատահել է տեսնել ռուսներ, որոնք հիասթափվել են հայկական գրականությունից, կարդալով «Армянские беллетристики» գիրքը, որի մեջ, պետք է խոստովանել, կան վերին աստիճանի անշնորհք և (,) մանավանդ գեղարվեստի տեսակետից, նախկին կտորներ: Բայց դեռ այդ ամբողջ վնասը չէ, որ հասցրել են մեզ, անկասկած (,) ամենաազնիվ դիտավորություններով, այդ գրքի հրապարակիչները: Նրանք իրանք գրքով, մանավանդ նրա երկրորդ հատորով, որ բարեբախտաբար լույս չդեսավ ամբողջապես և այլն» (Ս. Բ. Շահ-Նազարեանց. նշվ. աշխ., էջ 32): Թեմայի շարունակության մասին տե՛ս նույն տեղում, էջ 32–33:

* Խոսքը «Веселовский, Юрий. Стихотворные переводы. Выпуск I. Гейне. Армянские поэты. Ибсен. Москва, ...» գրքույկի մասին է: Նկատենք, որ «Մուրճ» ամսագրի խմբագրությունն այն ստացել է 1897 թ., որի մասին հայտնում է նույն թվականի № 10-ում՝ «Նոր ստացված գրքեր» բաժնում (էջ 1470):

Թարգմանիչը ճիշտ է նկատում առաջաբանում, թե իր գրքույկը անշուշտ չի կարող «լրիվ գաղափար տալ ժամանակակից հայ բանաստեղծության մասին» և որ ինքը «ցանկանում է առաջին քայլն անել» և ցույց տալ, «որ հայ բանաստեղծությունն էլ զուտ գեղարվեստական երկեր ունի»: Այդ նպատակով նա 34 թարգմանություն է դրել իր գրքույկում հետևյալ բանաստեղծների երկերից՝ Ծատուրյան (14 կտոր), Շահ-Ազիզ (8 կտոր), Հ. Հովհաննիսյան (6 կտոր), Լեռենց (5) և Դուրյան (1 կտոր): Հույս ունենալով, որ նպատակի կողմից այս միանգամայն գովելի ձեռնարկությունը ժամանակով «երկրորդ քայլն» էլ կունենա, տեսնենք ինչպես է արված «առաջին քայլը»:

Անկասկած գովելի է թարգմանչի եռանդը, ջանքը և մանավանդ նպատակը. բայց այս էլ կա, որ մարդիկ շատ համակրելի նպատակներ են ունենում, բայց չեն կարողանում հասնել նրանց զանազան աննպաստ հանգամանքների շնորհիվ, որոնք մասամբ անձնական են լինում, մասամբ անձից դուրս: Այդպիսի մարդ է այս դեպքում և Յու. Վեսելովսկին: Երևում է, որ և՛ ցանկություն կա և՛ եռանդ, բայց ինչ արած, որ հաջողությունը հեռու է փախչում ...

Ասած է՝ «լուսնի տակ նոր բան չկա», բայց ամեն բան նոր է, նայած թե որ կողմից է մարդ նայում: Դարերի մշուշից սկսած մինչև այսօր ո՞ր բանաստեղծը սեր չի երգել, ո՞վ չի հիացել բնության գեղեցկությունը դիտելիս, քանի՞ քերթողներ են հայրենասիրություն երգել, բայց նրանցից ամեն մեկը մի տեսակ է զգացել, իր աչքով է նայել երևույթների վրա, ուստի և իր տեսակ երգել: Քանի քանի նկարիչների վրձին է բանել Աստվածամոր պատկերը ստեղծելու համար, բայց և այնպես ամեն նկարիչ *իր* հոգին է դրել նրա աչքերում, *իր* ցանկացած ու երևակայած դիրքն է տվել նրան, *իր* մտատիպարի նման ստեղծել: Այդ է արվեստագետների* տարբերության հիմնապատճառը. նրանք շատ անգամ ոչ *այնքան իրանց* ընտրած նյութերով են տարբերվում**, որքան իրանց տեսողության անկյուններով: Զգացմունքի խորության, ըմբռնելու ուժի, թափանցելու կարողության, ճաշակի նրբության, դրդումների տարբերության աստիճանները հիմք են դառնում բանաստեղծների տարբերության: Այսպես տարբեր բանաստեղծ է Շահ-Ազիզը, տարբեր Հ. Հովհաննիսյանը և Ծատուրյանը. և թարգմանչի առավելությունն այն է, որ զգա այդ տարբերությունը և արտահայտել կարողանա: Այդ չի կարողացել անել Յու. Վեսելովսկին. նրա թարգմանությունների մեջ մենք չենք տեսնում բանաստեղծների ինքնուրույնությունը պահպանած. նա բոլորին մի հայտարարի է բերել: Մենք ունինք հայերենից թարգմանություններ, բայց չունինք Շահ-Ազիզի, Հ. Հովհաննիսյանի, Ծատուրյանի բանաստեղծությունների թարգմանությունը: Ամեն փոքր ի շատե ճաշակի տեր մարդ իսկույն կզգա այս պակասությունը Յու. Վեսելովսկու գրքույկը թերթելիս:

Բայց գոնե հավատարի՞մ է թարգմանությունը մտքի կողմից, կհարցնեն մեզ: Ցավելով պետք է ասենք, որ այս կողմից էլ շատ են կաղում թարգմանությունները: Ահա ձեզ օրինակներ.

* Բնագրում՝ «գեղարվեստագետների»:

** Բնագրում՝ «արվեստագետները ոչ այնքան իրանց ընտրած նյութերով են տարբերվում շատ անգամ»:

В тиши вдыхал я грудью жадной
Цветов роскошных аромат ...
И, освежен росой прохладной,
Дремал так мирно чудный сад ...

ահա բնագիրը (Հյուսիսափայլ, 1861, № 4)

Ամբրոսական ծաղիկներ վառ
Անուշություն էին բուրում,
Եվ երկնքի ցող կենարար
Բնությունն էր զովացնում:

Բայց վերջին տունը շատ ավելի անհաջող է.

И пел я с чистою душою
Все песни скромные свои ...
Я пел о родине порою,
О чувстве искренней любви ...

Բայց տեսե՛ք բնագիրը.

Ես անխռով երգում էի,
Իմ երգս սուրբ և մաքուր էր,
Ազատություն էի երգում,
Հայրենիքի պարծանք ու սեր:

Բավական է ուշադիր նայել վերջին տան վրա, որ տեսնեք թե ի՞նչ տարբերություն ունի բնագրից և նույնիսկ ո՞րքան անհեթեթ բաներ կան ասված թարգմանության մեջ. ես երգում էի, ասում է, իմ բոլոր համեստ երգերը ... Էդ հո լուսացավ! ...

Կամ Հ. Հովհաննիսյանի բանաստեղծությունից¹

Когда же ты с любовью взглянешь
Ты будишь светлые мечты ...
Скажи, – меня ты не обманешь
И в горе пожалеешь ты?...

Բայց բնագրում՝

Դու այժմ իբրև նոր արշալույս
Ինձ նոր բախտ ես գուշակում.
Սիրուն մանուկ, ցաված հոգուս
Արդյոք դու էլ չե՞ս խաբում ...

Ո՛րտեղից որտեղ:

¹ Բանաստեղծություններ, էջ 43:

Թարգմանիչ-բանաստեղծը շատ դժվարություններ պիտի տա-անցկենա՝ չափ, հանգ, բնագրին հավատարիմ լինել և այլն. ուստի կարելի է թույլ տալ, որ նեղն ընկած ժամանակ իր կողմից խոսքեր ավելացնի. բայց այս դեպքում պիտի դրած խոսքերը դեմ չլինեն թե բանաստեղծի և թե բանաստեղծության ոգուն: Մանավանդ պետք է այնպիսի խոսքեր դնել, որոնց համար բանաստեղծը կարող է պատասխանատու լինել: Այդպես չի արել մեր թարգմանիչը. օրինակ՝

Ударив по струнам, поведай снова миру
О грезах пламенных, как в прежние года!

Բնագիրը՝

Ոսկի լարերին դու ոգևորված
Զարկիր մատներով, թող դարձյալ հնչեն (Բան. Հ. Հ. - ի էջ 97):

Մենք չգիտենք, թե երգիչը առաջ «բոցոտ անուրջների» մասի՞ն էր մեզ հետ խոսում. ընդհակառակը, ինչպես երևում է, նա առաջ օրհներգում էր «գործերը բարվո և կարեկցության»:

Կամ նույն բանաստեղծության առաջին տողը՝

He оставляй, певец, отзывчивую лиру

բնագիրն ասում է՝

Մի թողնիր, երգիչ, քնարդ կախած.

Եվ լավ էլ ասում է: Եթե քնարը արձագանք տալու ընդունակ լիներ, էլ ինչ կարիք կար կոչում անելու թե «մի թողնիր, երգիչ, քնարդ կախած ... »

Ծատուրյանի «Երգ և մետաղ» ոտանավորից՝

Ты к песне любви равнодушно была, –

բնագրի մեջ՝

Երգչի երգը մերժեցիր.

Պարզ է, որ այլ բան է ասում թարգմանիչը, այլ բան՝ հեղինակը. երգ և մետաղի միջև ընտրություն անող աղջիկը այլ բնավորություն ունի մեկի տողերում, այլ՝ մյուսի. երգիչը երգ է նվիրել, Ծատուրյանի կշտամբանքին արժանացած աղջիկը *մերժել* է. այսինքն ուշադրություն դարձրել է, բայց ավելի լավ է համարել ոսկին. մինչդեռ թարգմանության մեջ այդ աղջիկը *անկարբեր* է երգչի երգի վերաբերմամբ ...

Մի վերջին օրինակ էլ.

О, придет-ли когда миг желанный любви?!
Дашь-ли волю ты мне свои грезы излить?
И любви поцелуй суждено-ли, скажи,
С этих розовых губ мне в ответ получить?!

Իսկ Ծառուրյանը գրում է.

Օ, օրհնյալ լինի այն քաղցրիկ թուփեր,
Երբ քեզ բոցավառ պատմեցի իմ սեր,
Եվ վարդ-շրթունքիցդ սիրուս փոխարեն
Ես մի ջերմ համբույր ստացա նվեր ...

Ինչպես տեսնում եք, բանաստեղծը համբույրն առել պրծել է և օրհնում է համբույր ստանալու թուփեր, իսկ թարգմանիչը դեռ երազում է համբույրի մասին ...

Քիչ-շատ հաջողվել են մի քանի թարգմանություններ. այսպես Ծառուրյանից՝ «Հերիք է որքան բախտը խաբուսիկ» (Բանաստ., էջ 57), «Սիրելի ես, նվիրական դու իմ քաղցր հայրենիք» (էջ 69), Հ. Հովհաննիսյանից՝ «Եվ այս գարուն կ'անցնի շուտով» (Բանաստ., էջ 89): Մի աչքի ընկնող պակասություն կա այս ոտանավորի թարգմանության մեջ. բանաստեղծն ասում է.

Միայն սերը միշտ կմնա
Իմ սրտումը կենդանի.
Ոչի՛նչ սիրող սրտի վրա
Բռնանալու ուժ չունի:

Իսկ թարգմանիչը՝

Но не умрет моя любовь!
Ее в душе храню я страстно ...
Ее изгнать из сердца вновь
Теперь ничто, ничто не властно ...

Բանաստեղծն ասում է, որ «սերը միշտ կմնա կենդանի» և հասկացվում է, որ միշտ էլ կենդանի է եղել. մինչդեռ թարգմանչի խոսքերից երևում է, որ առաջ սերը արտաքսված է եղել, իսկ այսուհետև ոչինչ չի կարող *նորից* արտաքսել ... Այդպես «վա՛յ-նաչարի» հաջողված կարելի է համարել և Հ. Հ. - ի «Քանի՛, քանի՛ կամեցել եմ» ոտանավորի թարգմանությունը* (էջ 71): Հաջողված լինելու կողմից բախտավոր են Ծառուրյանի բանաստեղծությունները. նրանք ավելի մոտ են բնագրին, նույնիսկ ոգու կողմից:

Այս առաջին փորձը սակայն չպիտի վիատեցնի թարգմանչին. հարկավոր է ավելի ջանք գործ դնել, ավելի աշխատել, ավելի մշակել. ընտրած նպատակը այդպիսի վերաբերմունքի արժանի է ...

Գրքույկը պատվական հրատարակություն է. մաքուր, շնորհքով, գեղեցիկ: Արժե ձեռք բերել:

Ն. Աղբալյան

«Մուրճ» (Թիֆլիս), 1898, № 1, էջ 131-135:

* Բնագրում «ոտանավորի թարգմանությունը» բառակապակցության փոխարեն գրված է՝ «բանաստեղծությունը»: